

ԿՈՄԻՏԱՍՈՎ ՎԱՐԴԱՊԵՏ



ԱՐԾ լացաւ. ջուրը լացաւ. ու ծառն է որբ.
Գիւղին սարէն իշնող հովուին սրինգն է լըռած.
Հասկերուն մէջ ալ կը թօշնի ծաղիկը բորբ,
Ու կռունկն իր բոյնը չի գտներ՝ հողմահալած...

Ուր է ծուխին շունչը, ուր է ձայնն անձրեւին,
Ուր ճրագներուն շողն հարսներու մատներէն ցայտ.
Մութը կ'իջնէ եւ լուռ սըրտերը կ'արիւնին.
Տրտում իր վէպը կը հեծէ աղբիւր մ'անյայտ:

Նոր արշալոյս մը կը ծագի սրտէն ցեղին.
Գարնան աղուոր աղջիկ մըն է լացող ուռին.
Չէ մեռած Ան որ լոյսն երգեց հայ ճրագներուն.

Սէրը երգեց. ոսկի որան, եզն ու արօր,
Եւ իր ձայնին մրրիկին մէջ խորհրդաւոր
Գեռ կը հոսի ջուրը պղտո՞ր մեր գետերուն...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Շահնեկան կտոր մը

Վերջերս, Բարիզի Նուպարեան Մա-
տենագրանի Գրադարանապետ բարեկամս
Պ. Ա. Անտոնեան կ'իմացնէր ինծի թէ,
ազգայինի մը կողմէ Մատենագրանին
նուիրուած մէկ քանի Հայ դրամներու մէջ
կայ հատ մը, Լեւոն արձանագրութեամբ,
որուն երկու երեսի պատկերի տեղերը արա-
բերէն արձանագրութիւններ կան, ու իմ
կարծիքս կը հարցնէր:

Բնականաբար, հեռուէն, առանց զրա-
մը տեսնելու բան մը չէի կրնար ըսել:

Գալով վրայի արձանագրութիւններուն,
չէ այնպէս, ինչպէս ոչ-գրամագէտի մը
աչքով տեսեր էր բարեկամս:

Գրամին առաջին կողման արձանագրու-
թիւնն որոշակի ընթեռնլի է.

Լ Ե Խ Ո Ն Թ Ա...
Խակ Բ. կողմէն կը կարդացուի
... Լ Ի Գ Ա Ղ Ա Բ Ս Ի Լ

Երբ ուշադիր նայուածքով մը զննուին
երկու կողմի պատկերները, այն ատեն
հարցը պիտի պարզուի.



Պահ մը մտածելով որ, մի որ եւ է ճար-
պիկ ոսկերիչի կողմէ կեղծուած կտոր
մըն է, կարգ մը ցուցումներ ըրի ճշղելու
համար այդ պարագան, և միանգամայն
խնդրեցի որ ինծի զրկէ այդ զրամին զրոշ-
մը, եթէ կարելի չէ զրկել լուսանկարը:

Պ. Անտոնեան բարութիւնն ունեցաւ ին-
ծի զրկելու այդ հետաքրքրական զրամին
լուսանկարը, ու իմ պատասխան-կարծիքս
յայտնելէ յետոյ անոր, աւելորդ չեմ նկա-
տեր «Բազմավէպ»ի միջոցաւ ալ այդ զրա-
մը ճանչցնել Հայ դրամագիտութեամբ ըզ-
բաղողներուն, և հետաքրքիր ազգային-
ներու:

Հաւաստուածին համաձայն, այդ զրամը
արձաթեայ է, և ունի սովորական մե-
ծութիւնը Ոտոբինեան արձաթ Հայ դրամ-
ներու:

Ուաջին կողմի պատկերն է, թէեւ բա-
ւական ալբուած, և սակայն զգալիօրէն
որոշ, թագաւորը որ կը ձիավարէ դէպի
աջ, սովորական տօլիք Ոտոբինեան Հայ
արձաթ և մաս մը պղինձ զրամներու:

Նոյն այս կողման պատկերին վրայ,
դատելով լուսանկարէն, կը տեսնուին հետ-
քերը արաբերէն surcharge եղած ար-
ձանագրութեան մը, զոր կարելի չէ կար-
դալ:

Երկուորդ կողմի պատկերը արդէն բո-
լորովին կը պարզաբանէ պարագան:

Որբան ալ արաբական նուիրական տա-
րագը, «Լէ իլէ...»ն տեսնուի, և սակայն
անոր տակն իսկ որոշակի կ'երեւայ Ոտո-
բինեան առիւծը, գարձած դէպի աջ, պոչը
բեկրեկ:

Ուրեմն, որոշ է որ դէմ յանդիման կը